



# ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀՀ-ՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ



Փետրվար 2022



# **ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

Մշակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ:



Փետրվար 2022

Այս հրապարակումը կատարվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ արտահայտված կարծիքների պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում արտահայտված որևէ նյութի, տեղեկության կամ կարծիքի անսխալության, ճշգրտության կամ հավաստիության համար: Հրապարակումը տպագրվել է ՀԳՀՄ-ի կողմից: Սույն հրապարակումը չի արտացոլում ԱՄԿ-ի տեսակետները կամ քաղաքականությունը:

# Ներածություն

**Հայաստանն ունի գրավիչ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտ, սակայն ամբողջ տնտեսության թվայնացման ընդհանուր մակարդակը ոգեշնչող չէ:** ՏՀՏ ոլորտում (առանց ՏՏ ենթաօլորտի) տնտեսական արտադրանքը 2012 թվականի 146 մլրդ դրամից 2020 թվականին աճել է մինչև 237.6 մլրդ դրամ, ինչը 6,3%-ով գերազանցում է ընդհանուր մակարդակում գրանցված տարեկան 4,7% աճի տեմպը: Միջին ՏՀՏ աշխատավարձերը երկրում ամենաբարձրն են՝ պայմանավորված տեղական շուկայում միջազգային խոշոր ընկերությունների ներկայությամբ: Այդուհանդերձ, ՏՀՏ ոլորտից դուրս հայկական բիզնեսները կաղում են թվային փոխակերպման գործընթացում: Հմտությունների զարգացման մարտահրավերը մնում է առանցքային, քանի որ բնակչության գրեթե կեսը չունի համակարգչային տարրական գիտելիք: ՏՀՏ հասանելիությունը նույնպես թվացյալ օպտիմալ է՝ թվային ենթակառուցվածքների ոլորտում ցածր մրցակցության պատճառով:

**Հայաստանում ՏՀՏ կարգավորումը թերզարգացած է:** Այսպիսով, անհրաժեշտ է իրականացնել մուտքի խոչընդոտների կարգավորման վերանայում: Ներկայումս, գոյություն չունի տեղական հանգույցի չանջատվող մշտական հասանելիություն («տեղական հանգույցը» ֆիքսված հանրային հեռախոսային ցանցում ֆիզիկական ոլորված մետաղական շղթան է, որը բաժանորդի տարածքի ցանցը կապում է բաշխման հիմնական կետին), և սպառողներին չի թույլատրվում նաև համարների տեղափոխելիությունը մատակարարների միջև փոփոխություն կատարելիս: Էլեկտրոնային կառավարման ծառայությունները գործում են 2008 թվականից, սակայն տարբեր ծառայությունների միջև փոխգործունակությունը դեռևս անբավարար է: Էլեկտրոնային կառավարումը չի նախատեսում նաև այն լիցենզիաների ամբողջականությունը, որոնք կանոնավոր կերպով անհրաժեշտ են բիզնեսին ու քաղաքացուն: Թվայնացման ռազմավարությունն ընդունվել է 2021 թվականին: Այնուամենայնիվ, Էլեկտրոնային առևտրի իրավական բազան դեռևս սկզբնական փուլում է:

**Հարկային և մաքսային մարմինները արդիականացրել են ընթացակարգերը՝ մուտք գործելով թվային ծառայություններ:** Հայաստանում հարկային և մաքսային հսկողությունն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեն: Հարկային դաշտում թվային հասանելիությունը գոյություն ունի 2010 թվականից, որն ավելի ամրապնդվեց Քովիդ-19-ի ժամանակ: Ինչ վերաբերում է մաքսային վճարումներին և ընթացակարգերին, ապա նախկինում արտահանման-ներմուծման գործունեության վրա ազդող վարչական անարդյունավետության վերաբերյալ բողոքները սովորական են եղել, և անցումը թվային միջոցներին հետաձգվել է: Դա այժմ պետք է փոխվի ազգային առևտրի պատուհանի արդիականացված հարթակի շնորհիվ, որը ենթադրաբար պետք է առցանց համախմբի առկա ծառայությունները: Այնուամենայնիվ, նման ազդակ կարծես թե չի նկատվում պետական կառավարման այլ ոլորտներում, որտեղ թվային հարթակներն անհասանելի են կամ անբավարար:

**Հայաստանի մասնավոր հատվածում թվայնացման երկու աստիճան կա:** Բանկային հաստատությունները, օրինակ, գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա՝ ստեղծելով

ընդհանուր վարկային բյուրոյի ծառայությունն արդեն 2004 թվականին: Բանկային հատվածը նաև շահում է շարժական ակտիվների հանրային ռեգիստրի առկայությունից: Եվ բանկերի մեծ մասն ունեն նաև իրենց բջջային հավելվածները՝ նախատեսված հաճախորդների տարբեր պահանջների համար: Վարկային ռիսկերի կառավարումը և իրավունքների կիրարկումն այսպիսով հեշտացվում են ինչպես մասնավոր, այնպես էլ պետական թվային ենթակառուցվածքների ինտեգրմամբ: Այնուամենայնիվ, կան ընդհանուր տնտեսության այլ հատվածներ, որոնք ցածր մակարդակի վրա են իրենց սեփական թվային փոխակերպման գործընթացում: Օրինակ, մանրածախ առևտուրը, որտեղ չափազանց շատ են կիրառվում կանխիկ գործարքները, թեև վաճառքի կետերն այժմ պարտադիր են:

**Պետական քաղաքականությամբ բիզնեսի մակարդակում վերապատրաստման և ցկյանս ուսուցման համար քիչ գործընթացներ են իրականացվում:** Հայաստանի տնտեսությունում գերակշռում են առևտրային ոլորտի բիզնեսները, որոնք հիմնականում շատ փոքր ձեռնարկություններ են, կամ այլ կերպ ասած՝ տարածքային առումով մոտ գտնվող բիզնեսներ: Սրանք այն բիզնեսները չեն, որոնցից պետք է ակնկալել կառուցվածքային մոտեցում աշխատակիցների վերապատրաստման նկատմամբ: Այնուամենայնիվ, Հայաստանում պետական քաղաքականությունը նույնպես չի լրացրել այդ բացը: Կառավարությունը կարծես թե չունի համակարգված քաղաքականության ծրագիր: Եվ նույնիսկ եթե այն ունենար, մարտահրավերը չէր սահմանափակվի սոսկ վերապատրաստումներով: Հիմնական հմտությունները, ինչպիսիք են SՏՏ և լեզվական հմտությունները, նույնպես պակասում են: Ավելին, ցկյանս ուսուցման անհատական ցանկությունը նույնպես հնարավոր չէ կարգավորվել:

## Քաղաքականության առաջարկներ

**Պետական քաղաքականությունը պետք է SՏՏ-ի ընդունումը պահպանի Քովիդ-19-ի արձագանքման առաջնագծում:** Համավարակի դեմ պայքարը ներառում է պետական և մասնավոր հատվածի համագործակցությունը բազմաթիվ ոլորտներում: Բազմաթիվ միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ-ներ) չունեն համապատասխան սարքավորումներ, երբ անսպասելիորեն հարկավոր էր անցում կատարել դեպի հեռավար աշխատանք և էլեկտրոնային առևտուր: Շատերին դա ընդհանրապես չհաջողվեց: Մյուսները զոհողություններով և շահագրգիռ կողմերի աջակցությամբ դիմակայեցին, հատկապես՝ պետության ջանքերի շնորհիվ՝ խուսափելու տնտեսական փլուզումից և գործազրկության արդեն իսկ բարձր մակարդակի աճից: Թվային ներառականությունը գալիք տարիներին կշարունակի մնալ մարտահրավեր: Այսպիսով, պետական քաղաքականությունը պետք է ապահովի հարկաբյուջետային հնարավորություն, որպեսզի շարունակի ՓՄՁ-ներին տրամադրել թվային վաուչերներ, ինչպես նաև այլ թվային գործիքներ՝ ինչպիսիք են հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման հավելվածները:

**Կառուցել պետական աջակցությունը թվայնացման ոլորտում կոնկրետ քաղաքականության ուղղություններով և տնտեսության տարբեր ոլորտներում:**

Կառավարությունը պետք է մշակի ՓՄՁ-ներին հարմարեցված քաղաքականության գործիքներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տեխնոլոգիական աջակցությունը, հմտությունների զարգացումը և ֆինանսավորման ռեսուրսները: Սրանք ուղղված են փոքր բիզնեսին բնորոշ տարբեր, սակայն բարդ խոցելիություններին: Ինքնագնահատման գործիքները, ինչպես արտաքին խորհրդատվական ծառայությունները, նույնպես կարագացնեն բիզնեսների մեծ մասի թվային առումով զարգացման գործընթացը: Ինքնագնահատման նման գործիքները պետք է հատուկ լինեն ոլորտին՝ ներկայացնելով արագ ուղղիչ առաջարկներ՝ արտադրողականության անմիջական բարելավման համար: Եվ ամենակարևորը, հարկավոր է մեծ շեշտադրում լինի բիզնեսն ավելի հաճախորդակենտրոն և թվային տարածքում առավել ակտիվ դարձնելու համար, այդ թվում (սակայն չսահմանափակվելով) Էլեկտրոնային առևտուրը և Էլեկտրոնային մարքեթինգը:

**Վերացնել մրցակցության խոչընդոտները, որոնք հետ են պահում թվային ենթակառուցվածքում հնարավոր ներդրումները:** Հակասական տվյալները վկայում են Հայաստանում ՏՀՏ հասանելիության սահմանափակության մասին: Թեև 4G ծածկույթը լայնորեն հասանելի է ողջ երկրում, արդյունաբերության նոր դերակատարների մուտքը ցանցեր, հավանաբար, խոչընդոտվում է հակամրցակցային ուժերի կողմից: Կառավարությունը պետք է վերանայի մուտքի առկա խոչընդոտները՝ կարգավորող դաշտը հնարավորինս մրցունակ դարձնելու նպատակով: Բարձրորակ ենթակառուցվածքի ապահովումը կարևոր է թվային անցմանն աջակցելու, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ընդունման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար, ինչպիսիք են 5G-ը (ցանցերը), արհեստական բանականությունը կամ իրերի համացանցը, որոնք բոլորն Էլ ամբողջ աշխարհում կպայմանավորեն բիզնեսի մրցունակությունը գալիք տարիներին:

**Ապահովել արդյունավետ մրցակցություն ՏՀՏ-ի հետ կապված ապրանքների շուկաներում:** Շատ տնային տնտեսություններ մնում են առանց ինտերնետ կապի և, հնարավոր է, չկարողանան ձեռք բերել նաև համապատասխան սարքավորումներ: Հայաստանը նման սարքավորումների ներմուծող է, որը պետք է օգտագործվի ոչ միայն տնային տնտեսությունների, այլ նաև ՏՀՏ ոլորտի մասնագետների կողմից մի երկրում, որտեղ ՏՀՏ ոլորտը քաղաքականություն մշակողների կողմից համարվում է աճի ռազմավարական լծակ: Հետևաբար, առկա պայմանները չպետք է խաթարվեն նշված ծախսերի պատճառով, ինչպիսիք են ինտերնետ կապի և հարակից ծառայությունների կայուն գները, կամ ներմուծման խոչընդոտները, որոնք բարձրացնում են սարքավորումների արժեքը: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը նույնպես պետք է զգույշ լինի՝ խուսափելու անարդյունավետ վարչարարական միջոցներից և շուկայի ոչ արդյունավետ միջամտություններից:

**Ներդնել կիբերանվտանգության իրավական դաշտը:** Ներկայում այն գոյություն չունի, և այս առումով Հայաստանն անբարենպաստ վիճակում է: Ներկայիս միջավայրում կիբերանվտանգությունը պետք է լինի ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածում ռիսկերի կառավարման ցանկացած ռազմավարության կենտրոնում: Կիբեր ռիսկերի դեմ իրավական դաշտը, ներառյալ տվյալների և գաղտնիության պաշտպանությունը, նույնպես պետք է ձևակերպել 2021-2024 թթ. Հայաստանի թվային ռազմավարության մեջ: Բացի այդ, բիզնեսի առաջնորդները և ընդհանրապես մասնավոր հատվածի բոլոր կազմակերպությունները պետք է լինեն տեղեկատվական

անվտանգության ոլորտում միջազգային լավագույն փորձի առաջատար ջատագովները: Տվյալները 21-րդ դարի արտադրության գործոնն են, իսկ տեղեկատվական համակարգերը այն ուղիներն են, որոնց վրա դրանք աշխատում են: Տվյալների նկատմամբ ոչ պատշաճ ուշադրությունն անհնար է այսօրվա աշխարհում:

**Պարզեցնել թվային նույնականացման շրջանակը:** Էլեկտրոնային ստորագրության գոյություն ունեցող համակարգը, որը հիմնված է նույնականացման քարտի ընթերցող սարքի և տարեկան վճարի վրա, հնացած է և պետք է փոխարինվի ժամանակակից տեխնոլոգիաներով, ինչպիսիք են QR կոդի սկանավորումը կամ կենսաչափական նույնականացումը: Էլեկտրոնային ստորագրությունը պետք է դառնա անձնական նույնականացման օրինականորեն ընդունված հիմնական գործիքը: Առանց լիովին գործառնական և անվճար Էլեկտրոնային ստորագրության համակարգի թվային ապրանքների և ծառայությունների կիրառումը լրջորեն կխաթարվի, ինչպես նաև շրջակա միջավայրը կծանրաբեռնվի թղթե արտադրանքի լրացուցիչ պահանջարկով, որից հնարավոր կլինի խուսափել: Թղթագուրկ հասարակություն և լիովին թվայնացված պետական կառավարում ստեղծելը պետք է լինի միջնաժամկետ քաղաքականության նպատակ: Նույնը կարելի է ասել լիովին թվայնացված բիզնես միջավայրի մասին:

**Ստեղծել ՓՄՁ-ների աջակցման առցանց գործիք:** Այս գործիքը պետք է կազմի ՓՄՁ-ների համար քաղաքականության աջակցության վերաբերյալ տեղեկատվության համախմբված և դինամիկ շտեմարան, որը հաճախ ցրված է, իսկ երբեմն Էլ՝ չհամակարգված տարբեր նախարարություններում: Այսպիսով, ձեռնարկությունները կկարողանան հեշտությամբ մուտք գործել և հասկանալ բոլոր տեսակի հասանելի աջակցությունը, ներառյալ, բայց չսահմանափակվելով ներդրումների և ֆինանսական աջակցությունը, մենթորությունը, ուսուցումը, բիզնես պլանի վերանայումները և այլն, և պարզել, թե ինչպես դրանք լավագույնս օգտագործել: ՓՄՁ-ների համար աջակցող գործիքը կարող է նաև գործել որպես քաղաքականության գնահատման և քաղաքականության գործիքների հաշվառման համար օգտակար տեղեկություն հավաքելու հարթակ: Այս տվյալները նաև օգտակար կլինեն աջակցության ծրագրերի ծախսերի և օգուտների հաշվարկը հավասարակշռելու համար:

**Բիզնեսի ուսուցման բովանդակության ստեղծումը, նույնիսկ եթե պետական սուբսիդավորում ստանա, պետք է ղեկավարվի մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից:** Գործատուների ասոցիացիաներն այդ նպատակի համար անփոխարինելի գործընկերներ են: Տնտեսության մեջ գիտելիքը հանրային բարիք է: Հետևաբար, աշխատողների վերապատրաստման պետական ֆինանսավորման դերն ու հիմնավորումն առկա է, թեև վերապատրաստման իրականացումը պետք է թողնել շուկայական ուղղվածություն ունեցող օպերատորներին: Վերապատրաստման ուսումնական ծրագրերի նախագծման մեջ լայնածավալ մասնավոր հատվածի ինստիտուցիոնալ գործընկերների, օրինակ՝ գործատուների միավորների ներգրավմամբ, ուսուցման մոդուլների մատուցման և արդյունքների հետ կապված մասշտաբները նույնպես կարող են մեծանալ: Եվ նույնքան կարևոր է, որ վերապատրաստման մոդուլները կարող են նաև ավելի պրագմատիկ դառնալ՝ անդրադառնալով աշխատանքի և արտադրանքի շուկաներում սթրեսային կոնկրետ իրավիճակներին, այդ թվում նաև ՏՀՏ-ի հետ կապված մարտահրավերներին:

**Նպաստել ֆինանսների ժողովրդավարացմանը ֆինանսական տեխնոլոգիաների և ֆինանսական գրագիտության միջոցով:** Ողջ աշխարհում ֆինանսական հարցերը ներկայումս գտնվում են փոփոխությունների շրջանում, հատկապես միջին եկամուտ ունեցող երկրներում, որտեղ բնակչության համեմատաբար մեծ մասը չունի բանկային հաշիվ և փոքր բիզնեսները չեն կարողանում խոշոր ընկերությունների նման հավասար հիմունքներով ֆինանսավորում ստանալ: Ֆինտեխը ֆինանսական տեխնոլոգիաների կարճ արտահայտումն է, և դրա հիմքում ընկած է ֆինանսական ապամիջնորդության գաղափարը, այսինքն՝ հեռացնել միջնորդներին վարկատուների և խնայողների միջև: Ֆինանսապես գրագետ վարկատուներն ու խնայողները երաշխավորներ են փողի անպատասխանատու օգտագործման դեմ: Ահա թե ինչու ֆինանսական գրագիտությունը պետք է լինի կրթական ուսումնական ծրագրերի մի մասը դեռևս տարրական դպրոցում, որպեսզի անհատներին զարգացնեն թվային աշխարհում, որտեղ հախուռն որոշումները և անմիջապես հաճույք ստանալու միտումը չափազանց գայթակղիչ են:

**Դարձնել էլեկտրոնային առևտուրն ավելի ամուր:** Նախնական վերլուծությամբ Հայաստանում էլեկտրոնային առևտրի կարգավորումը թերզարգացած է և անարդյունավետ: Քաղաքականություն մշակողները պետք է ուշադրություն դարձնեն այդ հարցերին՝ հաշվի առնելով Քովիդ-19-ի ժամանակ առցանց առևտրի արագ աճը և դեպի թվային շուկաներ զանգվածային տեղաշարժի հետ կապված հետևանքները (օրինակ՝ հարկային դաշտում): Քաղաքականություն մշակողները, ինչպես նաև պրակտիկ աշխատողները, այսպիսով, պետք է հիմնվեն 2021 թվականին Եվրամիության նախաձեռնած էլեկտրոնային առևտրի փորձնական ծրագրի փորձի վրա, որը ներառում է ԵՄ Արևելյան գործընկերության երկրների եռյակը (Վրաստան, Ադրբեջան և Հայաստանը): Այս փորձնական ծրագիրը, եթե հետագայում ուժի մեջ մտնի փաստացի պետական քաղաքականության և հարկային օրենսդրության մեջ, ապա համաձայն Եվրոպական Միությունում կիրառվող մեթոդաբանության Հայաստանում կառաջանան բարդություններ՝ կապված թվային վաճառքի ԱԱՀ-ի հետ:

**Լիովին ընդունել 2021-2024 թվականների թվայնացման ռազմավարությունը, սակայն իրականացնել այն ոչ պետական դերակատարների հետ համագործակցությամբ:** Կառավարությունը չպետք է իր շուրջը կենտրոնացնի բոլոր խնդիրները և չպետք է օտարի մասնավոր հատվածի կազմակերպություններին: Այնուամենայնիվ, ռազմավարության գործողությունների ծրագրում ներկայումս տեղ չեն գտել մասնավոր հատվածի գործընկերներ: Ավելին, շահույթ չհետապնդող կազմակերպությունները նույնպես բացակայում են, և նրանք նույնպես պետք է մասնակցեն այդ համագործակցային ջանքերի իրագործմանը: Այսպիսով, ՀՀ կառավարությունը պետք է միավորի տարբեր դերակատարների թվայնացման ռազմավարության շուրջ, այլ ոչ թե մենաշնորհի այն: Բացի այդ, քաղաքականություն մշակողները պետք է նաև համոզվեն, որ առցանց աշխատանքային հարթակները համազգային թվայնացման ընդգրկուն մոտեցման մաս են կազմում՝ համապատասխանեցնելով Հայաստանի աշխատանքային օրենսդրությունը թվային, ոչ նյութական, համաշխարհային տնտեսության հիմնական հատկանիշներին:

# Ամփոփում

- Հանրային քաղաքականությունը պետք է պահպանի ՏՀՏ-ի ընդունումը Քովիդ-19-ի արձագանքման առաջնագծում:
- Կառուցել պետական աջակցությունը թվայնացման ոլորտում կոնկրետ քաղաքականության ուղղություններով և տնտեսության տարբեր ոլորտներում
- Վերացնել մրցակցության խոչընդոտները, որոնք հետ են պահում թվային ենթակառուցվածքում հնարավոր ներդրումները:
- Ապահովել արդյունավետ մրցակցություն ՏՀՏ-ի հետ կապված ապրանքների շուկաներում:
- Ներդնել կիբերանվտանգության իրավական դաշտը:
- Պարզեցնել թվային նույնականացման շրջանակը:
- Ստեղծել ՓՄՁ-ների աջակցման առցանց գործիք:
- Բիզնեսի ուսուցման բովանդակության ստեղծումը, նույնիսկ եթե պետական սուբսիդավորում ստանա, պետք է ղեկավարվի մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից:
- Նպաստել ֆինանսների ժողովրդավարացմանը ֆինանսական տեխնոլոգիաների և ֆինանսական գրագիտության միջոցով:
- Դարձնել Էլեկտրոնային առևտուրն ավելի ամուր:
- Դարձնել Էլեկտրոնային առևտուրն ավելի ամուր: